ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

11.12.2025թ. N 16 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 193

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 16 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 16 հերթական նիստի օրակարգը.

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի տեսակները, դրանց դրույքաչափերը սահմանելու մասին,

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում 2026 թվականի տեղական վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին,

3)Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն» հիմնարկին գույք տրամադրելու և Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի №05 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,

4)Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 14-ի № 102 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

5)Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բաժինների կանոնադրությունները հաստատելու և 2024 թվականի փետրվարի 06-ի № 07 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,

6)Հրազդան համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին,

7)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

8)Հրազդանի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկների 2026 թվականի հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

9)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը

նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
10)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
11)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
12)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
13)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
14)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
15) Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
16)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
17)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
18)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
19)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
20)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
21)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
22)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
23)Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
24)Հրազդան համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,
25)Հրազդանի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների տարածքների վարձակալության վարձավճարների չափը սահմանելու և 2024 թվականի դեկտեմբերի 10-ի № 208 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
26)Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» հիմնարկի տարածքը վարձակալությամբ տրամադրելու մասին,
27)Դրամական պարգևներ տրամադրելու մասին,
28)Հրազդան քաղաքի Մուշ թաղամասի փողոցները անվանակոչելու մասին,
29)Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի փողոցները անվանակոչելու մասին,
30)Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի փողոցները անվանակոչելու մասին,
31)Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 11-ի № 180 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
32)Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին,
33)Քարտեզագրման անճշտության հետևանքով քաղաքացու սեփականություն փոխանցված

հողամասը Հրազդան համայնքի սեփականություն ճանաչելու մասին,
34)Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին,
35)Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրելու մասին,
36)Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրելու մասին,
37)Գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին,
38)Գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին,
39)Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու մասին,
40)Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 10-ի № 54 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
41)Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին,
42)Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին,
43)Պետական տուրքի գումարը վերադարձնելու մասին,
44)Հրազդան համայնքի հաշվեկշռից «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռին գումար փոխանցելու մասին,
45)Հրազդան համայնքի 2025 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,
46)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի № 220-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
47)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին,
48)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի 9-րդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 194-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 194 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Դրույքաչափերը (դրամ)
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝	
1)	հիմնական շենքերի և շինությունների համար՝	
	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝	15 000
2)	սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝	
ա.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,
բ.	501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

<table>
<tr><td>գ.</td><td>1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝</td><td>200 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,</td></tr>
<tr><td>դ.</td><td>3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝</td><td>1 000 000 դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 1 000 000 դրամի հանրագումարի ու սույն ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:</td></tr>
<tr><td>ե.</td><td>Շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող գործակիցները՝
<table>
<tr><th>Գոտի</th><th>Գոտիականության գործակից</th></tr>
<tr><td>1-4</td><td>5.0</td></tr>
<tr><td>5-8</td><td>4.0</td></tr>
<tr><td>9-12</td><td>3.0</td></tr>
<tr><td>13-16</td><td>2.0</td></tr>
<tr><td>17-20</td><td>1.0</td></tr>
</table></td><td></td></tr>
<tr><td>3)</td><td>ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝</td><td></td></tr>
<tr><td>ա.</td><td>մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝</td><td>5 000 դրամի և սույն կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը,</td></tr>
</table>

բ.	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	10 000 դրամի և սույն կետի, 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը,
2.	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
1)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝	3 000
2)	բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,	
3)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, Տեղական տուրքերի և վճարների մասին օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:	
3.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվությամբ սահմանված՝ շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար.	
1)	Հասարակական, արտադրական և այլ նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար՝	

ա.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,
բ.	501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,
գ.	1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	200 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

դ.	3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	1 000 000 դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 1 000 000 դրամի հանրագումարի ու սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:
4.	Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում (անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից) շինարարության թույլտվության երկարաձգման համար՝	
1)	Հասարակական, արտադրական և այլ նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար՝	
ա.	200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	60 000 դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,
բ.	501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	200 000 դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

գ.	1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	400 000 դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,
դ.	3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	2 000 000 դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 2 000 000 դրամի հանրագումարի ու սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:
5.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝	5 000
6.	համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200 000
7.	համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200 000
8.	համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200 000

9.	համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	60 000
10.	համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	50 000
11.	օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
1)	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	7 000
2)	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	11 000
3)	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	18 000
4)	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25 000
5)	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	40 000
6)	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	100 000
12.	օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
1)	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	7 000
2)	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	11 000
3)	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	18 000
4)	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25 000
5)	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	40 000
6)	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող	80 000

	հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	
13.	իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝	350
14.	համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
1)	առևտրի օբյեկտների համար՝	50 000
2)	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	100 000
3)	բաղնիքների (սաունաների) համար՝	300 000
4)	խաղատների համար՝	600 000
5)	շահումով խաղերի համար՝	400 000
6)	վիճակախաղերի համար՝	130 000
15.	համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝	
1)	հիմնական շինությունների ներսում՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	5 000
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	10 000
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	13 000
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	18 000
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	30 000
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	50 000
2)	ոչ հիմնական շինությունների ներսում՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1 000
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2 000
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4 000
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	7 000
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	14 000
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	20 000

16.	քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	5 000
17.	ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	
1)	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2 000
2)	թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	3 500
3)	սոցիալական գովազդի համար՝	0
4)	այլ արտաքին գովազդի համար՝	1 500
5)	դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝	375
6)	եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով	150
18.	Հրազդան համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացույցային տարվա համար՝	100 000
19.	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝	10 000
20.	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝	500 000
21.	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝	
1)	3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	2 500 000
2)	5հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	5 000 000
3)	7հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	7 000 000
4)	10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝	10 000 000
22.	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝	
1)	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների	

	(բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝	15 000
2)	հեստապարային ակումբի համար՝ օրացույցային տարվա համար՝	300 000
23.	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար	20 000
24.	Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար	10 000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների համաձայն՝ տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Հրազդան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների հիման վրա:

Հրազդան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանված են օրենքով նախատեսված չափերով:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական տուրքերը: Հետևաբար տեղական տուրքերը սահմանելու մասին ավագանու որոշման նախագծի ընդունումն ուղղված է համայնքի բյուջեի եկամտային մասի ապահովմանը:

Քանի որ, տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է, հետևաբար տեղական տուրքերը սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու տեղական տուրքերի սահմանման և գանձման հետ կապված հարաբերությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2025թվականի N 195-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածների, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածների.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Սահմանել՝

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում 2026 թվականի համար տեղական վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ենթակայության արտադպրոցական դաստիարակության, մշակութային և նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից 2026 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափերը և կիրառվող արտոնությունները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 195-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15000 դրամ:

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող բնակելի նշանակության, ինչպես նաև մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետի ա. պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 100-ից մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

բ. 300-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 70000 դրամ.

գ. 500 և ավել քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցված էսքիզային նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար.

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200

քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետի ա. պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 60000 դրամ.

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 դրամ:

3) Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

4. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ:

5. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

1) մինչև 1000 քմ՝ 3000 դրամ.

2) 1001-5000 քմ՝ 10000 դրամ.

3) 5001-10000 քմ՝ 20000 դրամ.

4) 10001 և ավելի քմ՝ 25000 դրամ:

6. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20000 դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ 5 000 դրամ:

8. Համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտուր իրականացնելու կամ Հրազդան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով Հրազդան համայնքի վարչական տարածքում (բացառությամբ գյուղական բնակավայրերի) շենքերից և շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկվող սարքերի, այդ թվում՝ բանկոմատների, վճարային տերմինալների, սուրճի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ

ըմպելիքների կամ այլ դիսպենսերների, սարքերի, սարքավորումների կամ բացօթյա առևտուր իրականացնելու համար այլ առարկաների (այսուհետ՝ սարքավորում) տեղադրման թույլտվության համար՝ սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝ 5000 դրամ, իսկ Ջրառատ, Լեռնանիստ, Սոլակ, Քաղսի գյուղական բնակավայրերում՝ յուրաքանչյուր ամսվա համար 3000 դրամ, մեկ սարքավորման համար:

9. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական՝ 200 դրամ.

բ. կամ, ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ՝ ամսական՝ 20 դրամ.

2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով՝

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ.

բ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 30 դրամ,

գ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ.

դ. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 4 դրամ.

ե. զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 դրամ.

զ. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 դրամ:

3) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ:

10. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ.

2) կամ ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 դրամ:

11. Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար փոխհատուցման վճար՝ մեկ էջի համար՝ 50 դրամ:

12. Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար.

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 200 դրամ.

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 2000 դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ 5000 դրամ.

4) մեկ ամսվա համար՝ 20000 դրամ.

5) մեկ տարվա համար՝ 200000 դրամ:

13. Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավազանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1 000 դրամ:

14. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝ 300 դրամ:

15. Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝

1) բնակելի նշանակության՝ անշարժ գույքի օբյեկտների համար՝ 5000 դրամ.

2) հասարակական և արտադրական նշանակության՝ սույն հավելվածի 15-րդ կետի 1-ին ենթակետով չնախատեսված նշանակության անշարժ գույքի օբյեկտների համար՝ 15000 դրամ:

16. Համայնքի վարչական տարածքում համայնքի սեփականություն հանդիսացող հենասյունների վարձակալության վճար յուրաքանչյուր ամսվա համար՝

1) հենասյուների վարձակալություն 1 հենասյան համար (կապի յուրաքանչյուր մեկ մալուխի անցկացման դեպքում)՝ 500 դրամ.

2) հենասյուների վարձակալություն 1 հենասյան համար (ուժային յուրաքանչյուր մեկ մալուխի անցկացման դեպքում)՝ 500 դրամ.

3) հենասյուների վարձակալություն 1 հենասյան համար (գովազդային վահանակներ տեղադրելու դեպքում)՝ 1000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 195-Ն որոշման

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվող մեկ երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը սահմանել ամսական 6000 (վեց հազար) դրամ:

2. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի վերահաշվարկ սահմանել.

1) հիվանդության պատճառով չհաճախած օրերի՝ բժշկական հաստատության կողմից տրամադրված տեղեկանք ներկայացնելու դեպքում.

2) երեխայի՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունվելու կամ ազատվելու օրվանից:

3. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների (երաժշտական և արվեստի դպրոցներ) ծառայություններից օգտվող մեկ երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը սահմանել ամսական 3000 (երեք հազար) դրամ, բացառությամբ սույն հավելվածի 4-րդ կետի:

4. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներում ընդհանուր գեղագիտական զարգացման գծով ուսումնառության ծառայությունից օգտվող մեկ սովորողի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը սահմանել ամսական 7000 (յոթ հազար) դրամ:

5. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Վ.Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկի ծառայություններից օգտվող մեկ երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը սահմանել ամսական.

1) թաեքվոնդո մարզաձևի համար՝ 4000 (չորս հազար) դրամ.

2) մյուս մարզաձևերի և խմբակների համար՝ 3000 (երեք հազար) դրամ:

6. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Հրազդան համայնքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» բյուջետային հիմնարկի ծառայություններից օգտվող մեկ երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը սահմանել ամսական 3000 (երեք հազար) դրամ: Էստրադայի, քանդակագործության, բատիկի, ասմունքի և դաշնամուրի խմբակների ուսուցումն իրականացնել անվճար:

7. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Արտակ Ռաֆայելյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» բյուջետային հիմնարկ հաճախող երեխաների մարզումներն իրականացնել անվճար:

8. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մատուցված ծառայությունների դիմաց օգտվողների համար սահմանել արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափը նվազեցնելով 50 տոկոսի չափով հետևյալ դեպքերում.

1) միևնույն ընտանիքից երկու և ավելի երեխաների՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելու դեպքում՝ երկրորդ և հաջորդ երեխաների համար.

2) չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների համար.

3) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար.

4) դատարանի վճռով անգործունակ ճանաչված ծնողի երեխայի համար.

5) հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված ծնողի երեխայի համար, որի մոտ սահմանված է ֆունկցիոնալության ծանր և խորն աստիճանի սահմանափակում.

6) Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամասում բնակվող երեխաների համար:

9. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության և մշակութային հաստատությունների ծառայություններից օգտվողների համար սահմանել արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափը նվազեցնելով 50 տոկոսի չափով հետևյալ դեպքերում.

1) միևնույն ընտանիքից երկու և ավելի երեխաների՝ արտադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելու դեպքում՝ երկրորդ և հաջորդ երեխաների համար.

2) չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների համար,

3) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար.

4) դատարանի վճռով անգործունակ ճանաչված ծնողի երեխայի համար.

5) հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված ծնողի երեխայի համար, որի մոտ սահմանված է ֆունկցիոնալության ծանր և խորն աստիճանի սահմանափակում:

10. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների համար սահմանել արտոնություն՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ հետևյալ դեպքերում.

1) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար.

2) հաշմանդամություն ունեցող երեխաների համար.

3) արցախյան պատերազմների կամ մարտական գործողություններին մասնակցած կամ զոհված կամ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող ճանաչված ծնողի երեխայի համար:

11. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների համար սահմանել արտոնություն՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ հետևյալ դեպքերում.

1) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար.

2) հաշմանդամություն ունեցող երեխաների համար.

3) արցախյան պատերազմների կամ մարտական գործողություններին մասնակցած կամ զոհված կամ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող ճանաչված ծնողի երեխայի համար.

4) կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

12. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվող մեկ երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի արտոնություններ կիրառել օրենսդրությանը չհակասող այլ դեպքերում՝ համայնքի ավագանու որոշմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հրազդան համայնքում 2026 թվականի համար տեղական վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածների, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի և «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 9-րդ, 10-րդ հոդվածների հիման վրա:

Տեղական վճարների դրույքաչափերը, օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Հրազդան համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական վճարների դրույքաչափերը նախորդ տարիներին հիմնականում մնացել են անփոփոխ: 2026 թվականի համար նույնպես առաջարկվում է սահմանված տեղական վճարների դրույքաչափերը հիմնականում թողնել անփոփոխ:

Համայնքային ենթակայության մանկապարտեզների ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է համայնքի բյուջեից՝ ելնելով երեխաների թվից: Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար սահմանվող տեղական վճարի հաշվարկման հիմքում ընկած է մանկապարտեզ հաճախող երեխաների վրա ուղղակի կատարվող ծախսը, որն ընդգրկում է սննդի և գույքի (տնտեսական, գրենական) ձեռքբերումը, անձնակազմի վարձատրությունը, կոմունալ ծախսերը, ինչպես նաև շենքերի պահպանման, ընթացիկ վերանորոգման և այլ ծախսերը: Յուրաքանչյուր երեխայի հաշվարկով պայմանավորված փոփոխական ծախսերի միջինացված ցուցանիշը մոտավոր կազմել է 35 000 դրամ:

Հաշվի առնելով համայնքի բնակչության սոցիալական վիճակը՝ առաջարկվում է սահմանել մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումար՝ 6000 դրամ, որը կազմում է մեկ երեխայի վրա կատարված ծախսի մոտ 15-20 %-ը:

Նույն տրամաբանությամբ են սահմանված նաև համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության և մշակութային հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափերը:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական վճարները: Նշված դրույթը ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 28.1-րդ հոդվածում: Հետևաբար տեղական վճարները սահմանելու մասին ավագանու որոշման նախագծի ընդունումն ուղղված է համայնքի բյուջեի եկամտային մասի ապահովմանը:

Տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող, օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է, հետևաբար տեղական վճարները սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու տեղական վճարների սահմանման և գանձման հետ կապված հարաբերությունները:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն արտոնություններ կարող են կիրառվել համայնքի ավագանու որոշմամբ: Սույն նախագծով սահմանվում են արտոնություններ տեղական վճարի դրույքաչափի նվազեցման կամ վճարից ազատելու՝ նախագծով նախատեսված դեպքերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 196

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿԻՆ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի №05 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն» հիմնարկին անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող 49154553 /քառասունինը միլիոն մեկ հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով KAMAZ KO-318 (KAMAZ-43253-3010-6) փոշեկուլ մեքենան /նույնականացման համար՝ XVCK04325M0000131, թողարկման տարեթիվը 2021/:
2.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի «Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց գույք օտարելու մասին» № 05 որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ին:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 197

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 102 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 14-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» N 102 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 197 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի 14-ի
N 102 որոշման

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ԿԱԶՄԸ

1. Հանձնաժողովի նախագահ՝ Ռոբերտ Դանիելյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
2. Հանձնաժողովի անդամներ.
   1) Արայիկ Մարգարյան - իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
   2) Արմեն Այվազյան - սոցիալական աջակցության և երիտասարդության հարցերի բաժնի պետ
   3) Սարո Ղարիբյան- սոցիալական աջակցության և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող
   4) Լիլիթ Եղիազարյան- իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ
   5) Անահիտ Սարգսյան - իրավաբանական բաժնի 1-ին կարգի մասնագետ
   6) Նարինե Խչոյան - Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ
   7) Թեհմինե Բադալյան - «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Հրազդանի ցերեկային կենտրոնի ղեկավար /սոցիալական աշխատող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 198

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի № 07 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1.Հաստատել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բաժինների կանոնադրությունները՝ համաձայն № № 1,2,3,4,5,6,7,8,9,10 հավելվածների:

26)Ապահովում է բաժնի առջև դրված գործառույթներից ու խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի,առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը:
27)Ստորագրում է իր բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը:
28)Իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
8. Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:
10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 9
Հրազդան համայնքի ավագանու
2025թ. դեկտեմբերի 11-ի N198 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2.Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3.Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.Բաժնի կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրն է իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման իրավական ապահովումը:

6.Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1)Մշակում է տեղական ինքնակառավարման իրականացմանն ուղղված իրավաբանական բնույթի հարցեր լուծող որոշումների և կարգադրությունների նախագծեր և ներկայացնում է համայնքի ղեկավարին,

2)Ապահովում է համայնքի ղեկավարի այն որոշումների և կարգադրությունների կատարումը և (կամ) կատարման հսկողությունը, որոնք վերաբերում են Աշխատակազմի իրավաբանական բնույթի գործառույթներին,

3)Ստուգում է համայնքի ղեկավարին ներկայացվող որոշումների և կարգադրությունների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և նշագրում դրանք,

4)Աշխատակազմում քննարկվող իրավաբանական լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ տալիս է եզրակացություններ,

5)Իրականացնում է ՀՀ օրենսդրական ակտերի և ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ բնույթի որոշումների համակարգումը,

6)Բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ,

7)Անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից

ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
8)Կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում Աշխատակազմի քարտուղարին,
9)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ,
10)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրումը և օրենսդրությանը հակասող իրավական ակտերի վերացումը կամ կասեցումը,
11)Համայնքի ղեկավարի կամ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է ստուգումներ համայնքային ենթակայության կառույցներում,
12)իրականացնում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների, ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստումը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նախապատրաստված նախագծերի վերաբերյալ տալիս է իրավական- փորձագիտական եզրակացություն,
13)հանդես է գալիս դատական ատյաններում՝ որպես համայնքապետարանի ներկայացուցիչ, աջակցում է դատարանների վճիռների և որոշումների կատարմանը, միջոցներ է ձեռնարկում համայնքի ազգաբնակչության իրավունքներն ու օրինական շահերն ապահովելու ուղղությամբ,
14) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է վարչական վարույթների հարուցման և իրականացման գործընթացները,
15) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման դիմումների ընդունման գործընթացը,
16) տրամադրում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ խորհրդատվություն,
17) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականների կրկնօրինակների, տեղեկանքների և այլ փաստաթղթերի թղթային կրիչի վրա տրամադրման աշխատանքները,
18) ապահովում է թղթային արխիվի պահպանումը և թվայնացման աշխատանքները,
19) իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից,
20)ապահովում է բաժնի առջև դրված գործառույթներից ու խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը,
21)իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
8. Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:

10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N10
Հրազդան համայնքի ավագանու
2025թ. դեկտեմբերի 11-ի N198 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) ներառված չէ Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2.Աշխատակազմն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայությունների ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հանրագրերի մասին», «Արխիվային գործի մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի (այսուհետ՝ համայնքի ղեկավար) որոշումներով և կարգադրություններով, ավագանու որոշումներով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև աշխատակազմի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3.Աշխատակազմը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով:

4.Աշխատակազմի կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

2.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.Աշխատակազմի հիմնական խնդիրներն են իր իրավասության շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը, ինչի իրականացման նպատակով աշխատակազմի կողմից կատարվում են հետևյալ գործառույթները.

1) համայնքի պաշտոնական կայքի վարումը, կայքի կառավարման և ՀԿՏՀ տվյալների շտեմարանի և ֆայլերի արխիվացման աշխատանքները.

2)օրենքով սահմանված կարգով կազմակերպում է ՀԿՏՀ ծրագրի միջոցով համայնքապետարանի աշխատակազմի էլեկտրոնային գործավարությունը, դիմումների, առաջարկությունների, բողոքների և պաշտոնական գրությունների փաստաթղթաշրջանառության հետ կապված աշխատանքները

3)ապահովում է փաստաթղթերի մուտքագրման և ելից փաստաթղթերի առաքման աշխատանքները,

4) ապահովում է համայնքի ավագանու նիստերի, որոշումների, համայնքի ղեկավարի կարգադրությունների ու որոշումների, աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառումն ու համարակալումը ՀԿՏՀ համակարգում, ինչպես նաև խորհրդակցությունների, ընդունելությունների և այլ քննարկումների արձանագրում և հանձնարարականների կատարման հսկողությունը.

5) ՀԿՏՀ համակարգում իրականացնում է բնակչության և կազմակերպությունների ռեգիստրի վարման աշխատանքներ.
6) կազմակերպում է քաղաքացիների սպասարկման գրասենյակի աշխատանքները:
7)կազմակերպում է համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության հետ կապված աշխատանքները.
8)Հրազդանի համայնքապետարանի աշխատակիցների կադրային գործի վարումը (հաշվառումը, արձակուրդների ձևակերպումն ու կադրերի հետ կապված այլ աշխատանքների իրականացում)
9)ապահովում է սահմանված ժամկետում փաստաթղթերի արխիվ ընդունելը, դրանց պահպանումը և անհրաժեշտության դեպքում տրամադրումը.
10) իր իրավասության շրջանակներում կազմում է Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով աշխատակազմի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից:
11)իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Աշխատակազմի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

3.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6.Աշխատակազմն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
7.Աշխատակազմը գլխավորում է աշխատակազմի քարտուղարը,
8.Աշխատակազմի քարտուղարին անմիջականորեն ենթակա և հաշվետու են աշխատակազմի աշխատակիցները:
9.Աշխատակազմի աշխատանքները ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
10.Աշխատակազմի աշխատանքների կազմակերպմանը մասնակցում է քաղաքացիների սպասարկման գրասենյակը:
11.Աշխատակազմն անհրաժեշտության դեպքում օժանդակում է մյուս բաժիններին՝ իրենց կանոնադրական լիազորություններն իրականացնելու գործում:
12.Աշխատակազմի քարտուղարը՝ կազմակերպում է աշխատակազմի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ աշխատակազմի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
13.Աշխատակազմի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
14.Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Աշխատակազմի քարտուղարը:
15.Աշխատակազմի քարտուղարի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16.Աշխատակազմի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մարմնի մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 199

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1.Հրազդան համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 590 000 /հինգ հարյուր իննսուն հազար/ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 200

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի 2026 թվականի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի 2026 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Չբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար սահմանել հավելավճար՝ պաշտոնային դրույքաչափի 5 տոկոսի չափով:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 200 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քաղաքաշինության և հողաշինության բաժին
2. Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին
3. Ֆինանսատնտեսագիտական բաժին
4. Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
5. Տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժին
6. Կրթության, մշակույթի և սպորտի բաժին
7. Սոցիալական աջակցության և երիտասարդության հարցերի բաժին
8. Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին
9. Իրավաբանական բաժին

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 200 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 113

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ԾԱԾԿԱԳԻՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /սահմանվում է հաստիքային 1 միավորի համար/	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1	Համայնքի ղեկավար	1		590,000		590,000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1		477,000		477,000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1		445,000		445,000
4	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1		429,000		429,000
5	Համայնքի ղեկավարի խորհրդական	2		422,000		844,000
6	Համայնքի ղեկավարի օգնական	3		396,000		1,188,000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
7	Սոլակ բնակավայրի վարչական ղեկավար	1		363,000		363,000
8	Քաղսի բնակավայրի վարչական ղեկավար	1		363,000		363,000
9	Լեռնանիստ բնակավայրի վարչական ղեկավար	1		363,000		363,000
10	Ջրառատ բնակավայրի վարչական ղեկավար	1		343,000		343,000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					-
11	Աշխատակազմի քարտուղար	1	1.1-1	477,000		477,000
12	Գլխավոր մասնագետ	1	2.3-39	288,000		288,000
13	Գլխավոր մասնագետ	1	2.3-40	288,000		288,000
14	Գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ	1	2.3-41	288,000		288,000
15	Գլխավոր մասնագետ- զարգացման ծրագրերի պատասխանատու	1	2.3-42	288,000		288,000
16	Գլխավոր մասնագետ- գնումների համակարգող	1	2.3-43	288,000		288,000
17	Առաջատար մասնագետ	1	3.1-35	237,000		237,000
18	Առաջատար մասնագետ	1	3.1-36	237,000		237,000
19	Առաջատար մասնագետ	1	3.1-37	237,000		237,000
20	Առաջատար մասնագետ	1	3.1-38	237,000		237,000
21	1-ին կարգի մասնագետ	1	3.2-16	215,000		215,000
22	1-ին կարգի մասնագետ	1	3.2-17	215,000		215,000
	Քաղաքաշինության և հողաշինության բաժին					-
23	Բաժնի պետ	1	2.1-1	429,000		429,000
24	Գլխավոր մասնագետ	1	2.3-1	288,000		288,000
25	Գլխավոր մասնագետ	1	2.3-2	288,000		288,000
26	Գլխավոր մասնագետ	1	2.3-3	288,000		288,000
27	Առաջատար մասնագետ	1	3.1-1	237,000		237,000
28	Առաջատար մասնագետ	1	3.1-2	237,000		237,000
29	Առաջատար մասնագետ	1	3.1-22	237,000		237,000
30	1-ին կարգի մասնագետ	1	3.2-1	215,000		215,000

	Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին					-
31	Բաժնի պետ	1	2.1-2	429,000		429,000
32	Գլխավոր մասնագետ	1	2.3-4	288,000		288,000
33	Առաջատար մասնագետ	1	3.1-3	237,000		237,000
34	Առաջատար մասնագետ	1	3.1-4	237,000		237,000
35	1-ին կարգի մասնագետ	1	3.2-2	215,000		215,000
36	1-ին կարգի մասնագետ	1	3.2-14	215,000		215,000
	Ֆինանսատնտեսագիտական բաժին					-
37	Բաժնի պետ	1	2.1-10	429,000		429,000
38	Բաժնի պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ	1	2.2-4	341,000		341,000
39	Գլխավոր մասնագետ	1	2.3-25	288,000		288,000
40	Գլխավոր մասնագետ	1	2.3-26	288,000		288,000
41	Գլխավոր մասնագետ	1	2.3-27	288,000		288,000
42	Գլխավոր մասնագետ	1	2.3-28	288,000		288,000
43	Առաջատար մասնագետ	1	3.1-23	237,000		237,000
44	Առաջատար մասնագետ	1	3.1-24	237,000		237,000
	Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին					-
45	Բաժնի պետ	1	2.1-4	429,000		429,000
46	Գլխավոր մասնագետ	1	2.3-10	288,000		288,000
47	Գլխավոր մասնագետ	1	2.3-11	288,000		288,000
48	Գլխավոր մասնագետ	1	2.3-12	288,000		288,000
49	Գլխավոր մասնագետ	1	2.3-13	288,000		288,000
50	Առաջատար մասնագետ	1	3.1-7	237,000		237,000
51	Առաջատար մասնագետ	1	3.1-8	237,000		237,000
52	Առաջատար մասնագետ	1	3.1-9	237,000		237,000
53	Առաջատար մասնագետ	1	3.1-10	237,000		237,000
54	Առաջատար մասնագետ	1	3.1-11	237,000		237,000
55	Առաջատար մասնագետ	1	3.1-12	237,000		237,000
56	1-ին կարգի մասնագետ	1	3.2-3	215,000		215,000
57	1-ին կարգի մասնագետ	1	3.2-6	215,000		215,000
	Տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին					-
58	Բաժնի պետ	1	2.1-11	429,000		429,000
59	Գլխավոր մասնագետ	1	2.3-29	288,000		288,000
60	Գլխավոր մասնագետ	1	2.3-30	288,000		288,000
61	Առաջատար մասնագետ	1	3.1-25	237,000		237,000
62	Առաջատար մասնագետ	1	3.1-26	237,000		237,000
	Կրթության, մշակույթի և սպորտի բաժին					-
63	Բաժնի պետ	1	2.1-14	429,000		429,000
64	Գլխավոր մասնագետ	1	2.3-34	288,000		288,000
65	Գլխավոր մասնագետ	1	2.3-35	288,000		288,000
66	Գլխավոր մասնագետ	1	2.3-36	288,000		288,000
67	Գլխավոր մասնագետ	1	2.3-37	288,000		288,000
68	Գլխավոր մասնագետ	1	2.3-38	288,000		288,000
69	Առաջատար մասնագետ	1	3.1-34	237,000		237,000
	Սոցիալական աջակցության և երիտասարդության հարցերի բաժին					-
70	Բաժնի պետ	1	2.1-13	429,000		429,000
71	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	2.3-33	288,000		288,000

72	Առաջատար մասնագետ	1	3.1-32	237,000		237,000
73	Առաջատար մասնագետ	1	3.1-33	237,000		237,000
74	1-ին կարգի մասնագետ	1	3.2-15	215,000		215,000
	Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին					-
75	Բաժնի պետ	1	2.1-7	429,000		429,000
76	Բաժնի պետի տեղակալ	1	2.2-3	341,000		341,000
77	Գլխավոր մասնագետ	1	2.3-19	288,000		288,000
78	Առաջատար մասնագետ	1	3.1-29	237,000		237,000
79	Առաջատար մասնագետ	1	3.1-30	237,000		237,000
80	1-ին կարգի մասնագետ	1	3.2-11	215,000		215,000
81	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-1	174,000		174,000
82	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-2	174,000		174,000
83	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-3	174,000		174,000
84	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-4	174,000		174,000
	Իրավաբանական բաժին					-
85	Բաժնի պետ	1	2.1-8	429,000		429,000
86	Գլխավոր մասնագետ-ՔԿԱԳ գործառույթներ իրականացնող	1	2.3-21	172,000		172,000
87	Առաջատար մասնագետ-ՔԿԱԳ գործառույթներ իրականացնող	1	3.1-17	160,000		160,000
88	Առաջատար մասնագետ	1	3.1-31	237,000		237,000
89	1-ին կարգի մասնագետ	1	3.2-12	215,000		215,000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					-
90	Վարորդ	1		267,000		267,000
91	Վարորդ	1		301,000		301,000
92	Գործավար	1		274,000		274,000
93	Գործավար	2		184,000		368,000
94	Անվտանգության պատասխանատու	2		294,000		588,000
95	Մեդիա օպերատոր	1		274,000		274,000
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					-
96	Փորձագետ-որոշակի գործառույթներ համակարգող	7		250,000		1,750,000
97	Անասնաբույժ (0.5 դրույք)	4		80,000		320,000
98	Ցանցային ադմինիստրատոր	1		257,000		257,000
99	Սպորտային միջոցառումների կազմակերպման և անցկացման պատասխանատու	1		308,000		308,000
	Ընդամենը	**113**				**31,723,000**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 201

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հաստատել.

1)«Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №1-ի:

2)«Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №2-ի:

3)Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №3-ի:

4)Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն» հիմնարկի 2026 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №4-ի:

5)Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №5-ի:

6)Հրազդանի համայնքապետարանի Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի 2026 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №6-ի:

7)Հրազդանի համայնքապետարանի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №7-ի:

8)Հրազդան համայնքի «Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ

առևտրային կազմակերպության 2026 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №8-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 201 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	«Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	Տնօրեն	1	407000	407000
2		Փոխտնօրեն	1	230000	230000
		Մարկետինգի և հասարակայնության հետ կապերի մասնագետ	1	120000	120000
4		Գործավար	1	140000	140000
5		Լուսային և ձայնային սարքավորումների օպերատոր	1	140000	140000
6		Էլեկտրիկ	1	160000	160000
7		Գանձապահ-ադմինիստրատոր	1	130000	130000
8		1-ին կարգի դերասան	4	110000	440000
9		Բարձր կարգի դերասան	4	155000	620000
10		Հսկիչ	2	105000	210000
11		Պահակ	4	115000	460000
12		Հանդերձապահ	2	123000	246000
13		Դռնապահ	1(0,5)	105000	52500
14		Դռնապահ	4	105000	420000
15		Բեմի բանվոր - տնտեսվար	2	160000	320000
16		Մաքրուհի	3	115000	345000
17		Մաքրուհի	3(0,5)	115000	172500
18		Գեղմասվար	1	105000	105000
19		Տեխնիկական սպասարկող	1	125000	125000
20		Բեմանկարիչ	1	135000	135000
	Ընդամենը		37		4978000

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 201 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
«ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 28

	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	«Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	Տնօրեն	1	250,000	250,000
2		Գրադարանավար	15	105,000	1,575,000
3		Գրադարանավար	11/0,5/	105,000	577,500
4		Գործավար	1	105,000	105,000
	Ընդամենը		**22.5**		**2,507,500**

Հավելված 3
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 201 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
«ՀՐԱԶԴԱՆՔԱՂԼՈՒՅՍ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	«Հրազդանքաղլույս» ՀՈԱԿ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Տնօրենի օգնական	1	301,000	301,000
		Գլխավոր մասնագետ-պահեստապետ	1	301,000	301,000
3		Գլխավոր մասնագետ	1	208,000	208,000
6		Գործավար	1	191,000	191,000
7		Եռակցող	1	179,000	179,000
9		Էլ. մոնտյոր	7	179,000	1,253,000
10		Էլ. մոնտյոր /բնակավայրերի 0.5/	2	89,500	179,000
11		Վարորդ	2	184,000	368,000
12	**Ընդամենը**		**16**		**3,387,000**

Հավելված 4
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 201 որոշման

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն» հիմնարկի 2026 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը՝ 70

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	<<Կոմունալ տնտեսություն>> հիմնարկ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Տնօրենի օգնական	1	280,000	280,000
3		Հաշվապահ	1	105,000	105,000
4		Մարդկային ռեսուրսների մասնագետ	1	280,000	280,000
5		Մեքենա-մեխանիզմների պա - տասխանատու	1	345,000	345,000
6		Գլխավոր մասնագետ	2	294,000	588,000
7		Առաջատար մասնագետ	1	275,000	275,000
8		Գործավար	1	195,000	195,000
9		Մասնագետ	6	195,000	1,170,000
10		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	4	328,000	1,312,000
11		Մեխանիզատոր /ավտոգրեյդեր/	1	250,000	250,000
12		Մեխանիզատոր /բելոռուս/	3	250,000	750,000
13		Մեխանիզատոր /սեզոնային/	6	130,000	780,000
14		Վարորդ	10	160,000	1,600,000
15		Բանվոր	6	160,000	960,000
16		Մաքրուհի	1	160,000	160,000
17		Բանվոր /ծառատունկի և ծառերի էտման/	4	130,000	520,000
18		Բանվոր/ոռոգման/ սեզոնային	3	105,000	315,000
19		Ավագ կոյուղագործ	1	333,000	333,000
20		Կոյուղագործ	3	208,000	624,000
21		Ներքին հարդարող /մալյար/	3	350,000	1,050,000
22		Սանտեխնիկ	1	250,000	250,000
23		Էլեկտրիկ	1	250,000	250,000
24		Սղոցավար	1	160,000	160,000
25		Ավտոփականագործ	1	160,000	160,000
26		Ավտոէլեկտրիկ	1	200,000	200,000
27		Պահեստապետ	1	160,000	160,000
28		Պահակ	2	105,000	210,000
29		Շարժիչագործ /մատորիստ/	1	250,000	250,000
30		Էլ. եռակցող	1	150,000	150,000
	Ընդամենը՝		70		14,089,000

Հավելված 5
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11 -ի
N 201 որոշման

«Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	<<Մաքուր Հրազդան >> ՀՈԱԿ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Տնօրենի օգնական	1	301,000	301,000
3		Ավազ մասնագետ	1	180,000	180,000
4		Առաջատար մասնագետ	1	155,000	155,000
5		Գործավար	1	142,000	142,000
6		Պահեստապետ	1	275,000	275,000
7		էլ . Եռակցող	1	105,000	105,000
8		Վարորդ (զազ միկրոավտոբուս)	2	142,000	284,000
9		Վարորդ (զիլ ինքնաթափ)	2	160,000	320,000
10		Բարձիչավար	1	221,000	221,000
11		Պահակ	0.5	52,500	52,500
12		Ծաղկաբույծ (սեզոնային)	3	105,000	315,000
13		Բանվոր	12	125,000	1,500,000
14		Մաքրուհի	20	125,000	2,500,000
	Ընդամենը		47.5		6,757,500
1		Բանվոր /այլընտրանքային ծառայող/	7	30,000	
	Ընդամենը		54.5		6,757,500

Հավելված 6
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11- ի
N 201 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ամսական աշխատավարձը
1	2	3	4	5	6
1	Հրազդանի համայնքապետարանի Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկ	Տնօրեն	1	295000	295000
2		Գործավար	0.5	125000	62500
3		Հյուսն	1	198000	198000
4		Հսկիչ	4	130000	520000
5		Հնոցապան-սանտեխնիկ	1	180000	180000
6		Մաքրուհի	10	125000	1250000
7		Բանվոր	1	125000	125000
Ընդամենը			18.5		2630500

Հավելված 7
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
N 201 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 27

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքայի ն միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	Տնօրեն	1	407000	407000
2		Տնօրենի տեղակալ	1	394000	394000
3		Տնօրենի օգնական	1	307000	307000
4		Գլխավոր մասնագետ - օգնական	1	274000	274000
5		Գլխ. մասնագետ	1	190000	190000
6		Մասնագետ	1.5	125000	187500
7		Գործավար	1	125000	125000
8		Հսկիչ	5	105000	525000
9		Վարորդ-մեխանիզատոր	1	147200	147200
10		Վարորդ / ԶԻԼ /	2	160000	320000
11		Բանվոր	11	105000	1155000
-	Ընդամենը		26.5		4031700

Հավելված 8
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11- ի
N201 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈՒԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈՒԱԿ	Տնօրեն	1	1	119100			119100
2		Հաշվապահ	1	1	109572			109572
3		Ընտանեկան բժիշկ	1	1	ըստ կցագրված բնակչության թվի			
4		Ընտանեկան բուժքույր	1	1	ըստ կցագրված բնակչության թվի			
5		Ընտանեկան բուժքույր	1	1	ըստ կցագրված բնակչության թվի			
6		օպերատոր	1	0.5	104000			52000
7		մայրապետ	1	0.5	104000			52000
Ընդամենը			**7**	**6**	**436672**			**332672**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2025թվականի N 202

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշումը.

Հրազդան համայնքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1.«Հրազդանի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Հրազդանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «Հրազդանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 219 որոշման 2-րդ կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2025թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2025թ. դեկտեմբերի 11-ի № 202 որոշման

Կազմված է 11 դեկտեմբերի 2025թ.
և բաղկացած է 9 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ --

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 11-ի
№ 202 որոշմամբ

Հրազդան համայնքի ղեկավար

_____ *Ս. Միքայելյան*

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«_____»_____ թ.
գրանցման թիվ _____
ՀՎՀՀ _____
19.05.2023թ. գրանցված կանոնադրության
թիվ -------փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«_____»_____ *2025թ.*
_____ *աշխատակից*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 2 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հրազդանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական հիմնական, այդ թվում՝ այլընտրանքային, հեղինակային և միջազգային կրթական ծրագիր՝ նախադպրոցական կրթության առնվազն մեկ տեսակով:

«Հրազդանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 2 նախադպրոցական հիմնարկի» (գրանցման համարը՝ 33.0085) վերակազմավորման արդյունքում ստեղծված ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:

«Հրազդանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախկին անվանումն է «Հրազդանի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2.Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է ք. Հրազդան, Հարավային թաղամաս /2:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1)հայերեն լրիվ՝ «Հրազդանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2) հայերեն կրճատ՝ «Հրազդանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ.

3)ռուսերեն լրիվ՝ «Детский сад-ясли № 2 Раздана» общинная некоммерческая организация

4) ռուսերեն կրճատ՝ «Детский сад-ясли № 2 Раздана» ОНО .

5) անգլերեն լրիվ՝ «Hrazdan № 2 Nursery-Kindergarten» pre-school educational institution.

6) անգլերեն կրճատ՝ «Hrazdan № 2 Nursery-Kindergarten» PsEI:

6. Հաստատությունը ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7.Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) և ներքին գնահատման հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11.Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու կամ նախադպրոցական ծառայություններ մատուցելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սանների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, սանի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձևավորումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս ներառվում են՝

1)հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2)մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սանների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած նորմերը.

4)սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած նորմերը:

19.Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) մասնագիտական վերապատրաստումների և խորհրդատվությունների, ծնողական կրթությանը միտված դասընթացների և ծրագրերի իրականացում.

3) ճկուն ռեժիմով սանին սպասարկելու ծառայություններ.

4) սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք.

5) սաների կազմակերպված տրանսպորտային փոխադրումներ.

6) երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20.Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) և ուսումնական նյութերին համապատասխան:

21.Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է ծրագրային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և նպատակաուղղված են յուրաքանչյուր սանի գիտելիքի, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

22.Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ ծնողի (սանի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (սանի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա:

24. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

25. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից և ավարտվում օգոստոսի 31-ին: Տարիքային խմբերում սաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

26. Տարիքային խմբերի ձևավորումը և սաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

27. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

28.Նախադպրոցական ուսումնական հաստատությունը տեսակով մսուր-մանկապարտեզ է՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ:

29. Հաստատության աշխատանքային ռեժիմը, տարիքային խմբերի թիվը, հաստատությունում սաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի, պետական և համայնքային հաստատությունների դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին:

31. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

32. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի կողմից, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ և համաճարակային միջոցառումների իրականացման, հիգիենիկ նորմատիվների պահպանման և սննդի որակի համար:

33. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ ենթարկվում են բժշկական զննության՝ օրենքով սահմանված կարգով:

4. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

34. Հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (սանի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), մասնաճյուղի ղեկավարը, դաստիարակը, դաստիարակի օգնականը, հոգեբանը, հատուկ մանկավարժը, սոցիալական մանկավարժը, ֆիզկուլտուրայի հրահանգիչը, երաժշտության դաստիարակը, բուժաշխատողը, լրացուցիչ կրթական ծառայության մանկավարժը և այլ մանկավարժական աշխատողներ:

35. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրենը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել հաստատության կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

36. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

37. Սանի և հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

38. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների անվանացանկին և պաշտոնների նկարագրերին:

39. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

40. Հաստատության կառավարումն իրականացնում է (իրականացնում են) հիմնադիրը (հիմնադիրները), պետական կառավարման կամ տարածքային կառավարման լիազոր մարմինը, տնօրենը՝ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

41. Հաստատության հիմնադրի լիազորությունները սահմանված են «Նախադպրոցական կրթության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

42. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

43. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և պաշտոնի նկարագրով իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

44. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ հաստիքի բացակայության դեպքում՝ բարձրագույն կրթություն և 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

45.Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական և ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

46. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է օգոստոսի 20-ից 30-ը:

47. Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հաստատության տնօրենը, որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

50. Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է մանկավարժական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում տվյալ նիստն արձանագրելու համար ընտրվում է նոր քարտուղար: Քարտուղարը պատասխանատու է մանկավարժական խորհրդի արձանագրությունների պատշաճ կազմման համար: Նիստի արձանագրությունը կազմվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում և ստորագրվում խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից: Մանկավարժական խորհրդի նիստը հնարավորության կամ անհրաժեշտության դեպքում կարող է ձայնագրվել:

51. Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝

1) տնօրենի նախաձեռնությամբ.

2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.

3) լիազորված մարմնի նախաձեռնությամբ:

52. Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են:

53. Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ:

54. Հաստատության տնօրենը մանկավարժական խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ մանկավարժական աշխատողներին գրավոր ծանուցմամբ (բացառությամբ արտահերթ նիստերի) տեղեկացնում է մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին:

55. Մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

56. Մանկավարժական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

57. Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

58. Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

59. Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝

1) հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի.

2) օրվա կանոնակարգի և պարապմունքների բաշխման ցանկի, օգտագործվող ծրագրամեթոդական գրականության.

3)ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման տարբերակների.

4) սաների տարիքային խմբերի համակազմի վերաբերյալ և ներկայացնում տնօրենի հաստատմանը:

60. Հաստատության ծնողական խորհուրդը կազմավորվում է տարիքային խմբերի ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

